# ՆՈՐ ԳՐՔԵՐ

Ս. Կարապետյան.— *«Մայիսյան ապստամբությունը Հայաստանում. 1920 թ. Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1961 թ. 336 էջ. գինը 1 ռ. 27 կ.։*

*Սույն աշխատությունը նվիրված է Հայաստանում Սովետական իշխանության համար բանվորների, աշխատավոր գյուղացիների և զինվորների մղած հերոսական պայքարի փառապանծ էջերից մեկին՝ 1920 թվականի մայիսյան զինված ապստամբության պատմությանը։ Փաստական հարուստ նյութի հիման վրա հեղինակը մեկնաբանում է ապստամբության սոցիալ-տնտեսական և քաղաքական նախադրյալները, նրա նախապատրաստման և իրականացման պատմությունը, ինչպես և ապստամբության պարտության գլխավոր պատճառները։*

ՅՈՒ. Մ. Կաչարավա.— *«Սովետական Վրաստան» (Համառոտ ակնարկ). Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1961 թ. 191 էջ. գինը 33 կ.։*

*Ներկա աշխատությունը նվիրված է Վրաստանում Սովետական իշխանության հաստատման և Վրաստանի կոմունիստական պարտիայի կազմավորման 40-ամյակին։ Աշխատությունը հանրամատչելի ձևով համառոտ տեղեկություններ է տալիս վրացական ժողովրդի՝ սովետական իշխանության 40 տարիների ընթացքում, կոմունիստական պարտիայի լենինյան ազգային քաղաքականության շնորհիվ ձեռք բերած պատմական հոյակապ հաջողությունների մասին՝ արդյունաբերության, գյուղատնտեսության և կուլտուրայի բնագավառում։*

Ե. Ս. Սարգսյան.— «Ստեփան Զորյան» Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1960 թ. 326 էջ, գինը 77 կոպ.։

Սույն աշխատության նպատակն է ցույց տալ, թե Ստեփան Զորյանի տասական թվականների ստեղծագործության մեջ որպիսի՞ լայն չափերով են գեղարվեստորեն բացահայտվել հայ հասարակ մարդու առաքինությունները, հոգեկան բարձր հատկանիշները, նրա մարդասիրությունը և խաղաղասիրությունը, բայց և բողոքելու ու չարիքի դեմ ընդվզելու նրա մեծ կարողությունը։

Ս. Հ. Ղազարյան.— «Փիլիսոփայական ռևիզիոնիզմի դեմ», Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1961 թ. 101 էջ, գինը 10 կ.։

Ուսումնասիրությունը նպատակ ունի ընթերցողին ցույց տալ ժամանակակից ռեֆորմիզմի և ռևիզիոնիզմի փիլիսոփայական մտքի սնանկությունը, նրա հոգեհարազատությունն ու կապը բուրժուական փիլիսոփայության հետ։ Աշխատության մեջ ցույց է տրվում, թե ինչպես ռևիզիոնիստական փիլիսոփայության դեմ մղվող պայքարում բացահայտվում է մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմի, մատերիալիստական դիալեկտիկայի և պատմական մատերիալիզմի կենսունակությունը։